«Население Еревана. Этносоциологические исследования», Ереван, изд-во АН Арм. ССР, 1986, 250 с.

«Երևանի բնակչությունը: Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ», Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, 250 էջ:

Արդի պայմաններում գիտությունների շերտավորմանը և նորագույն ճյուղերի առաջացմանը զուգահեռ ընթանում է նաև հակառակ պրոցեսը՝ միջճյուղային ինտեգրացիան, որի շնորհիվ ձևավորվում են գիտության նոր ուղղություններ։ Դրանցից է էթնոսոցիոլոգիան։ Այն ազգագրության և սոցիոլոգիայի եզրագծերում երևան եկավ շուրջ երկու տասնամյակ առաջ։ Նոր ուղղության հետազոտման խնդիրները գտնվում են երկմիասնության կոմպլեքսի մեջ. մի կողմից այն ուսումնասիրում է էթնիկական տարբեր միավորների նույնատիպ սոցիալական խմբերի մշակույթի և կենցաղի, ազգային ինքնագիտակցության, միջանձնային ազգային հարաբերությունների առանձնահատկությունները և այլն, մյուս կողմից՝ բացահայտում սոցիալական պրոցեսների ազգային բազմազանությունը, որը հնարավոր է արդյունավետ կառավարել միայն ազգային առանձնահատկությունների հաշվի առնման պայմաններում։ Այլ կերպ ասած, էթնոսոցիոլոգիայի նպատակն է իրար հետ «հունցել» սոցիալականը և ազգայինը՝ սոցիալականը ուսումնասիրել ազգայինի և ազգայինը՝ սոցիալականի մեջ։

Հաշվի առնելով նշված ուղղության ակնհայտ արդիականությունը, երկրի շատ վայրերում սկսած 1960-ական թվականների վերջերից անցկացվեցին էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ։ Նման հետազոտություններ Հայկական ՍՍՀ-ում կատարվեցին 1970-ական թվականների երկրորդ կեսին (Երևան քաղաքում) և 1980-ական թվականների սկզբներին (հանրապետության այլ քաղաքներում և գյուղական վայրերում)։ Ինֆորմացիայի հավաքման գլխավոր միջոցը «հարցման թերթիկն» էր, որը հնարավորություն տվեց հսկայական նյութ կուտակել։ Եվ ինչպես հավաստում է ծրագրի հեղինակ և գրախոսվող գրքի պատասխանատու խմբագիրներից մեկը՝ Յու. Հարությունյանը, ընտրության սխալի հավանականությունը տատանվում է +3 %-ի սահմաններում։

Ստացված նյութերով գրվեցին առաջին աշխատությունները՝ նվիրված Երևանի բնակչության ձևավորման աղբյուրներին, երկլեզվության տարածմանը, միջանձնային ազգային հարաբերություններին։ Լույս են տեսել նաև առանձին հոդվածներ։ Ասվածից ակնհայտ է դառնում, որ էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունների նկատմամբ մեզ մոտ ձևավորվում է որոշակի ճաշակ։ Սակայն, այսպես թե այնպես, հրապարակի վրա մինչև վերջերս բացակայում էր նման բնույթի ամբողջական աշխատությունը։ Այդ բացը մեծապես լրացնում է գրախոսվող կոլեկտիվ-սենագրությունը, որը խոշոր քաղաքի ուսումնասիրման առաջին փորձն է երկրում։ Ըստ էության այստեղ ազգագրությունն ավելի ամբողջական է ներկայացված, քան Միությունի տարբեր ռեգիոնները հետազոտող աշխատություններում։ Դա բնավ չի նշանակում, թե հարցի սոցիոլոգիական կողմը տուժել է։ Գրքում «ոչինչ կորսված չէ ազգագրությունից և շատ բան լրացված է սոցիոլոգիայից» (էջ 6)։ Դա բացատրվում է նրանով, որ հեղինակները պատմասոցիոլոգիական վերլուծության մեթոդները շղարշել են ազգագրական առատ նյութերով՝ ընդսմին պահպանելով պատմականության սկզբունքը։ Աշխատության արժանիքի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ուսումնասիրման է ենթարկվել ազգային տեսակետից միատարր քաղաք (Երևանի բնակչության շուրջ 96 %-ը հայեր են), որը նորույթ է երկրի մասշտաբով։

Մենագրությունը բաղկացած է առաջաբանից և 7 բաժիններից։ Առաջին երկու բաժիններում հեղինակը (Ռ. Կարապետյան) վերլուծել է Երևանի բնակչության աճի տեմպերը, բացահայտել կրթական մակարդակի, ազգային կազմի, տարիքային կառուցվածքի փոփոխման շարժը և այլ հարցեր։ Քննական հետազոտման են ենթարկված քաղաքի բնակչության ձևավորման աղբյուրները, միգրացիոն խմբերի սոցիալ-ժողովրդագրական պարամետրերը, զբաղվածությունը, սոցիալ-մասնագիտական կառուցվածքը։ Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում վերաբնակիչների սոցիալական կազմի և ժամանակակից կուլտուր-կենցաղային կյանքի հիմնական գծերի վերլուծությունը, խոշոր քաղաքում դրանց փոփոխման միտումների, ադապտացիայի հետ

կապված հարցերը։ Նկատենք, որ մեր մայրաքաղաքին վերաբերող այս և նման բնույթի այլ խնդիրներ առաջին անգամ են կոնկրետ առարկայական հետազոտման արժանանում։

Գրքի երրորդ բաժինը նվիրված է հոգևոր մշակույթի և մասսայական ինֆորմացիայի միջոցների վերլուծությանը։ Նրա հեղինակ Մ. Հակոբյանը քննել է ինֆորմացիայի հիմնական միջոցների տարածման և բնակչության կողմից հոգևոր արժեքների յուրացման հարցերը՝ կոմպլեքսային ձևով օգտագործելով ինչպես արխիվային, այնպես էլ վիճակագրական և սոցիոլոգիական նյութերը։ Ընդ որում, նա հետաքրքրող պրոբլեմները դիտարկել է սոցիալ-ժողովրդագրական տեսանկյունից (ըստ սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական պատկանելիության) և հասել բավական ուշագրավ եզրահանգումների։

Հետաքրքրությամբ է ընթերցվում հաջորդ՝ «Ընտանիքի էթնիկական առանձնահատկությունները» բաժինը (հեղինակ՝ Է. Նարապետյան), որն ազգագրության մեջ բաղաքային ընտանիքի ուսումնասիրման առաջին փորձերից է հանրապետությունում։ Հեղինակը Երևան քաղաքի ընտանիքների կազմը քննել է միութենական հանրապետությունների մայրաքաղաքների ընդհանուր ֆոնի վրա, վերլուծել ընտանիքների տիպերը, բնակարանային պայմանները (յուրաքանչյուր բնակչին ընկնող բնակտարածության հաշվով Երևանը մյուս մայրաքաղաքների շարքում գրավում է վերջին տեղերից մեկը), սոցիալ-մասնագիտական առանձին խմբերի բնակարաններով ապահովվածությանն աստիճանը և այլն։ Հետազոտելով ներընտանեկան փոխհարաբերությունները (ընտանիքի զլխավորի պրոբլեմը, ամուսինների մասնակցությունը տնային տնտեսության մեջ և այլն), նա եզրակացրել է, որ սոցիալական տարբեր խմբերի ընտանիքներում դրանք միանշանակ չեն։

Ուսումնասիրության հինգերորդ բաժինը վերաբերում է հարսանեկան արարողությունների արդի վիճակին։ Հեղինակը (Լ. Վարդանյան) քննել է ժամանակակից ադրիլակերպի բաղադրատարրերից մեկը՝ հարսանեկան ծիսակատարությունները, տեսակավորել հայկական հարսանեկան ավանդական և արդի ձևերը, նշել, որ սերնդափոխության ընթացքում առաջիններն աստիճանաբար կորցնում են իրենց առաջնությունները։ Միաժամանակ նա մի շարք փաստարկներով եզրակացնում է, որ հայերի մոտ հարսանեկան արարողության ավանդական եղանակը կպահպանվի (չնայած շատ դեպքերում ձևականորեն) նաև տեսանելի ապագայում։ Ընդհանրապես բաժինն աչքի է ընկնում վերլուծական բազմազանությամբ և առանձին վիճելի հարցերի նկատմամբ ուշադրավ մոտեցմամբ։

Շոշափելի արժեք ունի ոչ ծավալուն, բայց տարողունակ նախավերջին՝ «Ազգային հոգեբանության մի քանի գծերը» բաժինը, որը գրել է Ռ. Օհանջանյանը։ Նա հաջող փորձ է կատարել վերլուծելու էթնիկական ստերեոտիպերի հետ կապված այնպիսի հարցեր, որոնք կատարում են ազգամիջյան շփումը կանոնավորելու ֆունկցիա։ Շարադրանքի կարևորությունը մեծանում է նրանով, որ ազգային հարաբերությունների տեսության մեջ էթնիկական ստերեոտիպերը դեռևս կարոտ են անհրաժեշտ լուսաբանման։ Տալով այս կամ այն ազգի նկատմամբ մյուս ազգի ներկայացուցիչների ունեցած պատկերացումները, հեղինակը հույս է հայտնում, որ ազգային հարաբերությունների առավել համակողմանի ուսումնասիրման և ձևերի բացահայտման գործում էթնիկական ստերեոտիպը կարող է գիտական վերլուծության արժեքավոր աղբյուր դառնալ։

Աշխատության եզրափակիչ բաժինը նվիրված է ազատ ժամանակի և դրան առնչվող պրոբլեմների վերլուծությանը (հեղինակ՝ Ա. Հովսեփյան)։ Շարադրանքում դիտարկվում է դիտատեխնիկական առաջընթացի պայմաններում ազատ ժամանակի բաժնի մեծացման փաստը, նշվում, որ դրա տեմպերն այնքան արագ են աճում, որ հաճախ անհատը հոգեպես և ֆիզիկապես անպատրաստ է լինում տնօրինելու ազատ ժամանակը։ Այստեղից էլ հեղինակն առաջ է քաշում ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը և եղանակները, ընդգծում Երևանի աշխատավորության կողմից դրա տնօրինման տիպերի (ընթերցանություն, հեռուստադիտում, երեխաների դաստիարակություն, կինոհաճախում և այլն) համամասնությունը, ազատ ժամանակի բավարարության մակարդակը, վերջինիս դերն անհատի ներդաշնակ զարգացման գործում։ Քննվող հարցերը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեն։

Աշխատության հստակ կառուցվածքը, լակոնիկ լեզուն ու շարադրման ոճը վկայում են հեղինակային կոլեկտիվի և պատասխանատու խմբագիրների զգայի աշխատանքը։ Նկատենք, որ Միության մեջ լույս տեսնող նման բնույթի աշխատությունների մեծ մասում կա՛մ բարեխղճորեն շարադրվում է էմպիրիկ ինֆորմացիան (առանց տեսական լայն ընդհանրացման), կամ էլ

եղակի փաստերով հիմնավորվում է «մաքուր» տեսությունը։ Հեղինակային կոլեկտիվը խուսափել է նման ծայրահեղություններից։

Գրքում բերված սոցիոլոգիական հարուստ տվյալները «հրում» նյութ կարող են հանդիսանալ Հայկական ՍՍՀ արդի ժամանակաշրջանով զբաղվող պատմաբանի համար։ Այս տեսակետից ցանկալի է ամբողջ հանրապետության մասշտաբով հետազոտությունների շարունակումը, որը հնարավորություն կտար հարստացնելու Սովետական Հայաստանի պատմությունը և էապես ամբողջացնելու նրա սոցիալ-ժողովրդագրական խճանկարը։

Քննական մոտեցումը նաև խորհելու և մտորումների որոշ առիթներ է տալիս։ Այսպես, կուլտուր-կենցաղային կյանքում և ապրելակերպում աղդային առաջադիմական առանձնահատկություններ պահպանումն էլ ավելի բազմազան է դարձնում սովետական ժողովրդի հարուստ մշակույթը։ Ափսոսանք կարելի է հայտնել, որ շարադրանքում այն բավարար չափով բացահայտված չէ։ Աչքի են դարձնում նաև դրքի կառուցվածքում տեղ գտած բացթողումները։ Նպատակահարմար էր առանձին բաժիններ հատկացնել երկլեզվությանը և ապրելակերպին՝ վերջինս զետեղելով ուսումնասիրության վերջում։ Դրանով աշխատությունն ավելի ամբողջական տեսք կունենար։ Գործը շահած կլիներ, եթե ունենար վերջաբան, ուր ամփոփվեին արդյունքները և նշվեին անելիքները։ Ավելին, առաջաբանն էլ հակիրճ է։ Իսկ չէ՞ որ դիրքը հասցեագրվում է ոչ միայն մասնագետներին, այլև ընթերցող լայն շրջաններին, որոնք դրա մասին նախնական կարծիք կարող են կազմել առաջաբանով, և վերջաբանով։ Աշխատությունը ծանրաբեռնված է աղյուսակներով, որոնք գուցե անխուսափելի են նման բնույթի հետազոտության համար, սակայն կարծում ենք, որ մասնագետն անգամ կդժվարանա ընկալել որոշ աղյուսակներ և սխեմաներ։

Գրքի վերնագրի բացատրականի («էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ») հոգնակի ձևը այն տպավորությունն է ստեղծում, որ առնչվում ենք ոչ թե կոլեկտիվ մենագրության, այլ հոդվածների ժողովածուի հետ։ Համարակալված չեն նաև բովանդակության բաժինները, իսկ ծանոթագրությունները տեղափոխված են ոչ թե աշխատության, այլ համապատասխան բաժինների վերջում, ինչպես սովորաբար ընդունված է հոդվածների ժողովածուների համար։ Երբեմն էլ հղումները կատարվում են հնացած հրատարակություններից։

Սրանք, անշուշտ, չեն նվազեցնում գրախոսվող աշխատության արժեքը։ Հարուստ նյութի բազմաբնույթ վերլուծությունը, քննված պրոբլեմների մշակման յուրահատուկ մեթոդները և եզրահանգումները ուսումնասիրությունը դարձնում են օգտակար և անհրաժեշտ։

ՎԼԱԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու